

- **Պիթակորականները** կարելի է ժամանակագրական առումով բաժնել երկու մեծ խումբերու.-

- *Վաղ Պիթակորականներ* (մ.թ.ա. 6-րդ – 4-րդ դարերուն) եւ

- *Նոր Պիթակորականներ* (մ.թ.ա. Ա. դարէն սկսեալ):

Այս առնչութեամբ կարելի է փիլիսոփաներու բազմաթիւ անուններ յիշատակել, թէ՛ հարաւային Իտալիոյ Կրոտոնէն եւ թէ՛ այլ վայրերէ:

3. **Հերակլիտոս Եփեսոսցի** (Heraclitus of Ephesus, յուն.՝ Hêrákleitos, 520 – 455 մ.թ.ա.)

Ծնած է՝ Եփեսոս (Յոնիա, Փոքր Ասիոյ արեւմտեան ծովափին, Միլետոսէն՝ հիւսիս): Իրեն աշակերտած *Կրատիկոս* (Cratylus, յուն.՝ Kratýlos, մ.թ.ա. 5-րդ դար), հաւանաբար եղած է ուսուցիչը՝ Պլատոնի: Հերակլիտոս կոչուած է նաեւ՝ «մռայլ փիլիսոփան», որովհետեւ իր փիլիսոփայութիւնը յոռետեսական, առեղծուածային ու դժուար հասկնալի է: Մեզի, միայն հատուածներ հասած գրքին (յուն.՝ „Peri phýseôs“ = «Բնութեան մասին») սկիզբը, Հերակլիտոս իր հաղորդելիքները կը կոչէ „lógos“:

Հերակլիտոսի համաձայն ամէն ինչ *փոփոխական* է. փոփոխութիւններ, որոնք ունին իրենց կարգն ու կանոնը, կայունութիւնը, օրինաւորութիւնը եւ շարունակականութիւնը: Այս փոփոխութիւնները իրենց ամբողջութեան մէջ բնական միութիւն մը կը կազմեն: Այս մասին ան ըսած է՝ «*Ամէն ինչ կը հոսի*» կամ «*Կարելի չէ միեւնոյն գետը երկու անգամ մտնել*»:

Հերակլիտոսի համաձայն, հիմնական նախանիւթը՝ յաւիտենական ու կենսալի *կրակն* է (յուն.՝ πῦρ), որ առնչուած է՝ բանականութեան ու գիտակցութեան: Կրակէն կը յառաջանայ ջուրը, իսկ ջուրէն՝ հողը: Հերակլիտոս, երբեմն այս կրակը նաեւ «հոգի» կ'անուանէ:

Հերակլիտոս, իր բնափիլիսոփայութեան, իմացաբանութեան ու հոգեբանութեան կողքին մշակած է նաեւ՝ բարոյագիտութիւնը, ուր կը շեշտէ բարոյական կանոններու կարեւորութիւնը, մարդոց փոխյարաբերութիւններու մէջ: Մարդոց վարմունքն ու վերաբերմունքը պէտք է համապատասխանէ բարոյական կանոններուն, մանաւանդ խուսափելու է տաքարիւնութենէն կամ ամբարտաւանութենէն (յուն.՝ hybris), որու պատճառը, հոգիին մէջ չափէն աւելի «*կրակ*»ի գոյութիւնն է:

Բարոյախօս Հերակլիտոսի նշանաւոր խօսքերէն է՝ «*Ամբարտաւանութիւնը պէտք է աւելի արագ մարել, քան մեծագոյն հրդեհը*» կամ «*Անտեսանելի ներդաշնակութիւնը շատ աւելի զօրաւոր է, քան տեսանելին*»:

4. **Էլեական դպրոցը**

Հաստատուած մ.թ.ա. 540 թուականին, *Քսենոփանէս Կոլոփոնցիի* կողմէ, Էլեայի (Elea), հարաւային Իտալիոյ յունական մասին մէջ եւ շարունակուած մինչեւ մ.թ.ա. 430 թուական: Այս դպրոցի երկու այլ ներկայացուցիչներն են՝ *Պարմենիդէս Էլեացին* եւ *Զենոն Էլեացին*: